

ԷԶՄԻԱԾԻՆ - Քառասուն, քաղաքակազմ, պատկերագիրք: Սկիզբը 32 էջ համարա- գրուած, սակայն վերջը նկարադրերը ա- նանց քիւի: Էջմիածին, 1962:

Խմբագիր Ա. Հատիտեան, անշուշտ վե- հափառին ցանկութեամբ, ձեռք զարկած է ցարդ մեր եկեղեցական հարստութեան եւ վանքերուն համար եղական ու խիստ դո- վելի ձեռնարկի: Նման դործ մը, որ վան- քը եւ վանքին եկեղեցական հարստու- թիւններէն հայ մշակոյթի գործեր կը ներկայացնէ, ոչ միայն մեր մշակոյթը կը ժողովրդականացնէ, այլ նաեւ կրնայ նիւ- թական նպաստ բերել Հաստատութեան:

ԷԶՄԻԱԾԻՆ այսպէս նախաձեռնարկ կ'ըլլայ կարեւոր դործի մը, որ յուսանք վարակիչ ըլլայ ուր որ հայ մշակոյթի վանքեր կան կեդրոնացած: Գործին ըս- կիզբը 32 էջերը կը դրաւեն հայերէն եւ ասոր անգլիերէն թարգմանութիւնը ե- ղող աշխարհագրական, կրօնական, մշա- կութային ծանօթութիւններ Հայոց մա- սին, կարճ ու ամփոփ: Զարմանալիօրէն ոչինչ կը գտնենք էջմիածնի տաճարին ու վանքին մասին առ հասարակ:

Նկարները դոհացուցիչ են, թէեւ քիչ նորութիւն ներկայացուած է հոն: Աւե- լի քիչ են նաեւ կարեւոր թուականներ: Օրինակ՝ Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմա- րանի շինութեան թուականը, ինչպէս նաեւ շինութեան թուականները Էջմիած- նի վանքի Աշտարակ-Ժամացոյցի, Էջ- միածնի Դարպասի, Զուարթնոցի: Ոչ իսկ մօտաւոր թուական մը տրուած է Լու- սաւորչի Աջին, Գեղարդի պահարանին, Մեռնի Կաթսային, Նոյեան Տապանի մասունքը կրող արծաթեայ պահարանին, արծաթեայ Աւետարանի կազմին:

Հաւուց Թառի Ամենափրկչի խաչը ան- տարակոյս ԺԱ. դարէն շատ աւելի հին է: Քեօթահայի (Կուտինահայ) յախճապա- կի գինիի ամանը, որուն վիզը կտրած է, ԺԵ. դարէն է, այլ ԺԶ. դարէն, աւելի ճիշտ՝ 1751էն: Յախճապակիի այս նկա- րէն ետք տրուած պատկերները կապ մը չունին Էջմիածնի հետ: Էջմիածնի թան-

գարանին մէջ կան ուրիշ շահեկան շատ կտորներ, որոնք աւելի յարմար էր տը- պել քան արդէն շատ լաւ ծանօթ երեւանի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ նկարները, եւայլն:

Այսուհանդերձ, այս նախաձեռնարկն համար շնորհապարտ ենք թէ՛ վեհափա- ուին եւ թէ՛ խմբագիր Ա. Հատիտեանին, եւ կը մաղթենք որ աւելի կատարեալ պատ- կերապիւրք մը չուշանան հրատարակելու, նկատի ունենալով Էջմիածնի այցելողնե- րու մեծ բազմութիւնը, հայ կամ օտար:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

\*\*\*

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՆԻ. 1915- 1965: Հրտ. «Զարթօնք» օրաթերքի: Պատրաստեց Գեքսամ Ահարոնեան, գոր- ծակցութեամբ Նազարէթ Թովալեանի: Պէյրութ, տպ. Ատլաս, 1965, էջ ԺԶ + 1115 + 5 (մեծադիր, պատկերազարդ):

Ապրիլեան Եղեանի յիշամեակի առի- թով լոյս տեսան բազմաթիւ հատորներ, յուշագրութիւններ, ջարդերու վերաբե- րեալ վաւերացութիւններ, եւայլն:

Լրագիրներ եւ թերթեր բացառիկ թի-ւեր հրատարակեցին աւելի կամ նուազ ճոխութեամբ: Բայց բոլոր այս հրատա- րակութիւններու բազմութեան մէջ, բա- ցառիկ ուշադրութիւն կը դրաւ «Յուշա- մատեան Մեծ Եղեանի» հաստատօր հա- տորը, որ իսկական յուշարձան մըն է՝ նուիրուած բազմահազար նահատակներու լուսաչող յիշատակին, զեղահիւս լուսա- պսակ մը անոնց անշիւրիմ նշխարներուն:

Թերթատելով այս կոթողային գործը, անոր մէջ կը հանդիպինք ծանօթ բանա- սէրներու, պատմաբաններու, հին եւ ե- րիտասարդ գրագէտներու, բանաստեղծ- ներու գրութիւններուն: Մողայիքէ հըս- կայ նկար մըն է՝ կազմուած քովէ քով շարուած յարգի կամ պարզ քարերէ, որ ամբողջութեան մէջ, սակայն, պատկա- ուելի է եւ ամէն դնահատանքի արժանի:

Ակներեւ է որ, ընդհանրապէս, յօդուա- ծագիրները սիրտ եւ հոգի դրած են իրենց գրութիւններու մէջ, իսկ հրատարակիչ-

ներն ալ ծախս եւ խնամք չեն խնայած հատորը ճոխ եւ ներկայանալի դար- ձնելու համար: Հոն՝ զրեթէ ամէն էջի վրայ, կը հանդիպինք լուսանկարներու, որոնցմէ շատերը անտիպ, ինչպէս նաեւ լրջօրէն ուսումնասիրուած քարտէսներու, որոնք աւելի կը բարձրացնեն արժէքը այս ծաւալուն գործին:

Ընթերցողը հաճոյքով եւ խանդավա- ոութեամբ կը կարգայ հայ ժողովուրդին մղած հերոսամարտերուն վառ նկարագը- թութիւնները, անհատներուն քաջագոր- ծութիւնները, զեկավարներուն ճարտար ուղղափարութեան պատմութիւնը:

Հատորը արժէքաւոր հում նիւթեր կը պարունակէ, որոնք օգտակար կրնան ըլ- լալ ապագայ պատմիչներուն:

Փափաքելի է որ նման գործեր հրատա- րակուին նաեւ անգլիերէն եւ ֆրանսերէն լեզուներով, օտարներուն ծանօթացնելու համար հայ անիրաւուած ժողովուրդին պատմութիւնը եւ զիւրացնելու Հայ Դա- տին յաղթանակը:

Համաշխարհային պատմութեան մէջ քիչ անգամ տեսնուած դէպք մըն է ցեղա- սպանութիւնը: Իսկ 1915ի Ապրիլեան Ե- ղեանը, Հայ ազգը բնաջնջելու սարսաղ- ղեցիկ փորձը, ամէնէն սեւ էջը կը կազմէ Ժամանակակից պատմութեան: Անշուշտ, տասնեակ մը հսկայ հատորներ պիտի չը- բաւին նկարագրելու համար հայ ժողո- վուրդին տեղահանութիւնը, կրած տա- ուապանքներն ու կոտորածը, ցոյց տալու համար ջարդարարներուն անմարդկային, հրէշային արարքը, ջարդերու վնասին, հայ մտաւորականութեան, բարոյական եւ նիւթական կորուստին անկշռելի տարո- ղութիւնը:

Սակայն, «Յուշամատեան Մեծ Եղեանի» մեծածաւալ գիրքը գործ մըն է, որ պա- տիւ կը բերէ հրատարակիչներուն: Այս հատորը թղթատելէ ետք, դոհունակ սըր- տով կրնանք ըսել մեր նահատակներուն հետ. «Մեքեմ եկել եմք դարբից ու գնում եմք յաղթական, դէպի դարբեր նորից»:

Հ. Ն. Տ.

ԿԱՍԱՆԴՐԱ - (Պատկեր իրական կեան- քից): Արամ Երեմեան: Տպ. Վեներիկ, Ս. Ղազար, 1963, էջ 40:

Արամ Երեմեանի բեղուն գրչը, երկար տարիներու ընթացքին, արտադրած է բանասիրական եւ գրական բազմաթիւ հատորներ: Անխոնջ եւ վաստակաւոր գը- րագէտին եւ մանկավարժ դաստիարակին կեանքը բոլորակէզ նուիրում մը եղած է Հայ Գիրքին եւ Նոր Սերունդին:

Իր «Կասանդրա» պատմութեամբով, անի- կա մեզի կը ներկայանայ իբր շնորհալի պատմող մը: Ամբողջովին լոյսով եւ հա- ճելի նրբերանգներով նկարուած է Կա- սանդրայի՝ այս պատմութեամբին գլխաւոր զերակատարին դիմագիծը: Կասանդրան՝ մօտ 18 տարեկան աղջիկ մը, օժտուած արուեստագէտի խառնուածքով եւ իր սե- ուին բոլոր բարեմասնութիւններով, իբր հեքիաթային պարիկ մը կը ներկայանայ մեզի:

Կասանդրայի կուսագեղ դիմագիծէն ետք, հոն կ'երեւին նաեւ ծերունի բարի ծառայի մը տիպարը, Կասանդրայի ար- ուեստագէտ հայրը եւ մայրը:

Այս պատմութեամբին ընթերցումը անոյշ զեփիւռի մը նման, կու գայ պահ մը դո- վացնել սիրտը եւ ազնուական յուզումի ալիքներով կը համակէ քեզ: Հոն՝ սէրը կը նկարագրուի իբր «մաքուր, անկեղծ սէր, որ երաժշտութեան նման՝ բառեր չի պահանջում»:

Հեղատաճ առուակ մըն է, որ կ'անցնի մարդագետիներու եւ պուրակներու մէ- ջէն: Հոն՝ չես հանդիպիր ահաւոր ան- դունդներու, զգլխիչ ջրվէժներու, կըն- ճիւններու, հետաքրքրութիւնդ բորբոքող տեսարաններու, հոգեբանական եւ իմաս- տասիրական խորութիւններու: Մէկ շուն- չով կը կարգաս ամբողջ հատորը, պահ մը կը յափշտակուիս, հուսկ յուզումով վա- կելու համար գիրքը: Երազ մըն է, որ երբ արթննաս, անոր քնքուշ ազդեցութեանէն բան մը կը մնայ սրտիդ մէջ:

Լեզուն մաքուր է եւ քնարական, յար-

մար իր նիւթին: Բնութեան նկարագրում-  
թիւններու մէջ զուսպ է, Վիեննայի շքեղ  
Operaի ներկայացումին մէջ՝ ճոխ:

Ազնիւ եւ բիւրեղի պէս պայծառ հոգիի  
մը ցոլբերը կան այս դերքին մէջ, որ վի-  
պակ մը ըլլալէ աւելի, քնարերգական  
պարզ եւ անսեթեւեթ ոճով դրուած գրա-  
կան գործ մըն է:

Հ. Ե. Տ.

\*\*\*

ԱՐԵՎԵԼԱՆԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Ընտիր  
էջեր, կենսագրութիւններ, գործեր, բա-  
նարան, մատենագիտութիւն: Կազմեց՝  
Սիմոն Սիմոնեան: Պէյրութ, տպ. Սեւան,  
1965, էջ 18+786+4 (մեծագիր):

Ունէինք արդէն հայ նոր գրականու-  
թեան նուիրուած բազմաթիւ աշխատա-  
տիրութիւններ: Սակայն Ս. Սիմոնեանի  
հրատարակած «Արեւելահայ Գրականու-  
թիւն»ը մեզի կը ներկայանայ նոր զգես-  
տաւորումով, գրական ընտիր կտորներու  
նոր բովանդակութեամբ եւ թարմու-  
թեամբ:

Անխոնջ աշխատաւորի տիպար մըն է  
Ս. Սիմոնեան: Քիչ ժամանակի ընթացքին  
որակաւոր անթիւ գործեր հրատարակած  
է անիկա: Իր տպարանի մեքենաները կը  
ճոնչեն անդուլ, լոյս աշխարհ բերելով  
արժէքաւոր արտագրութիւններ: Անիկա  
ունի իր շարաթաթերթը՝ «Սփիւռք»ը, ո-  
րուն շուրջ հաւաքուած են տաղանդաւոր  
երիտասարդներ, իրենց գրական ուղին  
փնտռող նորահաս զրոյներ:

«Արեւելահայ Գրականութիւն» հատորը  
կու գայ ստուարացնել Ս. Սիմոնեանի  
արդէն իսկ պատկանելի վաստակը, ծան-  
րացնելով՝ արդէն իսկ ծանրակշիռ իր աշ-  
խատութիւնները:

Այս գիրքին մէջ հեղինակ մը մեզի կը  
ներկայանայ իր ամբողջականութեամբ՝  
կենսագրական գիծերով եւ ստեղծագոր-  
ծութիւններէն ընտիր նմոյշներով: Մտե-  
նադիտական բաժինէն զատ, հոն կը գտ-  
նենք նաեւ հեղինակներու երկերուն գրե-  
թէ ամբողջական թուարկումը: Նորու-

թիւն է եւ մեծապէս օգտակար՝ բառարկ-  
տական ճոխ բաժինը, գրական անուննե-  
րու եւ ծածկանուններու ցանկը:

Հատորին մեծ մասը կը գրաւեն հեղի-  
նակներու գործերէն քաղուած կտորները:  
Այդ կտորներու ընտրութիւնը, ընդհան-  
րապէս, եղած է հասկացողութեամբ: Սա-  
կայն գրական ճաշակը, որ գլխաւոր դեր  
կը կատարէ այդ ընտրութեան մէջ, անձէ  
անձ տարբերելով, շարք մը գրութիւննե-  
րու ընտրութեան յաջող ըլլալը կը մնայ  
վիճելի:

Գրադէտներու ստեղծագործութիւննե-  
րու մասին Ս. Սիմոնեանի ըրած դատում-  
ները ծամծմուած չեն, այլ պարզ, յս-  
տակ, շեշտուած եւ զուսպ: Աւելի բարեա-  
ցակամ դատաւոր մըն է՝ քան կտրող նե-  
տող վիրարոյժ մը: Մեր ըսածը օրինա-  
կով մը ցոյց տուած ըլլալու համար, հոս  
կը ներկայացնենք Օշականի եւ Ս. Սի-  
մոնեանի կարծիքները՝ Վրթանէս Փափա-  
ղեանի մասին:

Օշական՝ 1914ին, «Մեհեան» գրակա-  
նութեան եւ արուեստի թերթին մէջ, կը  
գրէ (թ. 2, էջ 27-28)՝

«Կար ատեն մը, երբ Պ. Վրթանէս Փա-  
փաղեան պղտիկ փառասիրութիւններ մի-  
այն ունէր: ... Տարիքին հետ իր յաւակ-  
նութիւնն ալ մեծցաւ ու միջակ, ողորմե-  
լի վէպերու մարտկոցը (pile) շարժեց ա-  
նոր ոտքերուն տակ: — Միշտ հասարակ  
պատմողներ պիտի ըլլանք Պ. Վրթանէս  
Փափաղեանին պէս, երբ հոգեբանութեան  
սուրբները մոռացումի մէջ թաղենք, երբ  
զանոնք չկիրարկենք այն հրաշալի զան-  
գուածին վրայ, որ Հայ-Յեզ անունը  
կը կրէ»: (Ընդգծումները մեզմէ):

Իսկ միեւնոյն Վ. Փափաղեանի մասին  
Ս. Սիմոնեան կը գրէ. «Ինչուն եւ պատ-  
մելու շնորհը զինք կը դասեն արեւելա-  
հայ գիմացող արձակագիրներու խումբին  
մէջ» (էջ 430):

Վերի երկու մէջըրերումներէն կը տես-  
նուի թէ առաջինին հեղինակը՝ խստաբիւր  
դատաւոր մըն է, իսկ երկրորդին հեղի-  
նակը՝ քիչ մը լայն ծակերով մաղ գործա-  
ծող քննադատ մը:

«Արեւելահայ Գրականութիւն» հատո-  
րին մէջ հետաքրքրական է զիւղագիր հե-  
ղինակներու բաժինը, ուր նոր դէմքեր  
կ'երեւին: Ս. Սիմոնեան կը գրէ. «Ներ-  
կայ ձեռնարկը («Արեւելահայ Գրականու-  
թիւն»ը) կը հաշուէ աւելի մեծ թիւով ա-  
րեւելահայ զրոյներ քան նախորդ որեւէ  
ձեռնարկ («Ռուսահայ Գրողներ»ը կը պա-  
րունակէ 24 հեղինակներ, Սուրխաթեանի  
«Հայ Գրականութիւն»ը՝ 23 զրոյ եւ 6  
զիւղագիրներ, ներկայ հատորի 42 զրոյ-  
ներու գիմաց): Եւ քանի մը էջ անդին  
Ս. Սիմոնեան կը շարունակէ. «Հարկ է  
այստեղ յայտնել որ «Արեւելահայ Գրա-  
կանութեան» նուիրուած այս ձեռնարկի  
մէջ, երբ 42 զրոյներու բարձրացոյցինք  
արեւելահայ զրոյներու թիւը... եւն»:

Ուրեմն, արեւելահայ հարիւրէ աւելի  
երկրորդական զրոյներու հոյլէն, մէջն  
ըլլալով Գրիգոր Արծրունի, Լեւոնց եւն,  
նախընտրութիւն տուած է զիւղագիրնե-  
րուն եւ անոնց թիւը 12ի բարձրացուցած  
է, անշուշտ այդ զիւղագիրներու մէջ  
դանելով տաղանդ եւ արժէք: Գէորգ Դո-  
ղոսեանի մասին գրելով՝ Ս. Սիմոնեան  
կ'ըսէ. «Իր բոլոր գրածներէն ու գործե-  
րէն աւելի՝ իր մէկ քերթուածը՝ հռչա-  
կաւոր «Ծիծեռնակ»ը յաւերժացուց իր ա-  
նունը հայ գրականութեան պատմութեան  
մէջ» (անդ, էջ 87): Նոյն է պարագան  
արեւմտահայ բանաստեղծ Գարեգին Պէշ-  
կէօթիւրեանի, որ իր «Ե'կ իմ սրինգ»  
հիանալի քերթուածով մտած է հայ գրա-  
կանութեան սեմէն ներս: Հին մամուլին  
մէջ, հաւանաբար, մէկէ աւելի գրական  
գոհարներ կան, թէ՛ ոտանաւոր, թէ՛ ար-  
ձակ, որոնք Դոյզոսեանի «Ծիծեռնակ»ին  
չափ եւ թերեւս աւելի գրական արժէք ու-  
նենան: Ո՛րքան փափաքելի է որ այդ տա-  
ղանդի կայծերը՝ մոխիրներու տակէն  
լոյս աշխարհ բերուն՝ գրական հասկա-  
ցողութիւն ունեցող անձերու կողմէ:

Ս. Սիմոնեան քաջութիւնը ունեցած է  
շարք մը զիւղագիրներ երեւան հանելու,  
որ գովելի աշխատանք մըն է անտարա-

կոյս: Ամէն բանէ աւելի ճաշակէ, դրա-  
կան խոր ըմբռնողութենէ կախում ունի  
նման ընտրութեան մը յաջողութիւնը:  
Մեր համեստ կարծիքով, Ս. Սիմոնեան,  
աւելի լաւ ըրած պիտի ըլլար, եթէ այդ  
զիւղագիրներէն դոնէ մէկ երկուքը իրենց  
առաջուան տեղը, որ է մոռացութեան քո-  
ղին ներքեւ ձգած ըլլար:

Մեզի համաձայն, շատ մը առաւելու-  
թիւններով եւ նորութիւններով օժտուած  
այս հատորին մէջ, եթէ կայ խոցելի կէտ  
մը, առ ալ հաւաքուած հատընտիր կտոր-  
ներուն ծանօթութիւններու պակասն է:

Ս. Սիմոնեանի «Արեւելահայ Գրակա-  
նութիւն» հատորին նման երկերու մէջ,  
չի բաւեր հեղինակէ մը յաջող կտորներ  
ընտրել եւ զանոնք արտատպել, գոհանա-  
լով խրթին բառերու բացատրութիւնները  
միայն տալով: Այլ պէտք է այդ կտորնե-  
րուն գրական համառօտ վերլուծումը  
տալ, ծանօթութիւններու լուսարձակը  
բանալ անոնց մուկ անկիւններուն վրայ,  
մատնանշել զրոյին ուրիշ հեղինակներէ  
կրած ազդեցութիւնը, անդրադառնալ ա-  
նոր լեզուի եւ ոճի մասին, ցոյց տալ թէ  
ինչ բանի մէջ կը կայանայ գրութեան ար-  
ժէքը, եւայն, մանաւանդ երբ գիրքը ծը-  
րադրուած է իրր գասաղիւրք ալ գործած-  
ուելու:

Ձեռքիս տակ ունիմ Ֆրանսական եւ ի-  
տալական գրականութեան հատորներ:  
Բայց անոնց մէջ, ամէն էջի վրայ, կը  
հանդիպինք բացատրութիւններու, լու-  
սաբանութիւններու, որոնք ոչ միայն  
մարտելի կը դարձնեն ներկայացուած գը-  
րութիւնը, այլ նաեւ ընթերցողը կրնայ ըմ-  
բոյնանել անոնց գրական զեղեցիկութիւնը:

Եզրակացնելով՝ ըսենք թէ Ս. Սիմո-  
նեանի այս հատորը, օգտակար գործ մըն  
է: Կարեւորը այն է, որ ընթերցողը եւ  
կամ աշակերտը գոհացուցիչ կերպով դա-  
դափար մը ունենայ գրագէտի մը մասին:  
Ս. Սիմոնեան յաջողած է իր նպատակին  
մէջ:

Հ. Ե. ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ